

4.2.2. Ներքին զբոսաշրջություն¹

Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների, 2002թ. հունվար-դեկտեմբերին հանրապետության տարածքում տեղաբաշխված կոլեկտիվ և անհատական զբոսաշրջիկների տեղավորման միջոցներում (կացարաններում) տեղավորվել են 113458 զբոսաշրջիկներ (ՀՀ ռեզիդենտներ) կամ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ նրանց թվաքանակն աճել է 7.6%-ով :

Ներքին զբոսաշրջությունն ըստ նպատակի

(մարդ)

	2001 թ. հունվար-դեկտեմբեր	2002 թ. հունվար-դեկտեմբեր	Տեսակարար կշիռը (2002թ. %)
Ընդամենը զբոսաշրջիկներ²	117079	121315	100.0
որոնցից ըստ նպատակի՝			
գործնական	45181	49199	40.6
հանգստի և ժամանցի	25516	28864	23.8
բուժման	3491	6005	4.9
այլ	42891	37247	30.7

¹ Ներքին զբոսաշրջությանն առնչվում են այն զբոսաշրջիկները, որոնք ճանապարհորդում են իրենց իսկ երկրի (հիմնական բնակության վայրի) սահմաններում:

² Բերված տվյալներն արտացոլում են միայն հյուրանոցներում, հյուրանոցային հանգրվաններում, առողջարաններում, հանգստյան տներում հաշվառված զբոսաշրջիկներին: